

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀՀ սփյուռքի նախարարության 2016թ. ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորված ծախսերի վերաբերյալ

«ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը.

**1. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով»** (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 05) ծրագրով նախատեսվել է 299011.1 հազ. դրամ: Համաձայն ՀՀ կառավարության 724-Ն որոշման կատարվել է վերաբաշխում 3675.9 հազ. դրամի չափով և ճշտված պլանը կազմել է 295335.2 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 276003.2 հազ.դրամ, իսկ դրամարկղային ծախսը 272620.6 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմում է 22714.6 հազ. դրամ: Տնտեսումը պայմանավորված է թափուր հաստիքների, գնումների գործընթացում ներկայացված ավելի ցածր գնային առաջարկների, ինչպես նաև համակարգիչների վերանորոգման, արտասահմանյան գործուղման ծախսերի խիստ խնայողության ռեժիմով աշխատելու հաշվին: Գումարը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: 2015 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 263453.7 հազ. դրամ: 2016 թվականի դրամարկղային ծախսը 2015 թվականի համեմատ աճել է 9166.9 հազ. դրամով, որը պայմանավորված է քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բնականոն աճով:

**2. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով»** (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 04) ծրագրով նախատեսվել է 93764.2 հազ. դրամ: Համաձայն ՀՀ կառավարության 724-Ն որոշման կատարվել է վերաբաշխում 416.3 հազ.դրամի չափով: Ճշտված պլանը կազմել է 93347.9 հազ.դրամ: Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 82355.1հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 10992.8 հազ. դրամ: Տնտեսումը պայմանավորված է թափուր աշխատատեղերի, մրցույթներում ներկայացված ցածր գներով, ինչպես նաև ներկայացուցչական ծախսերի խնայողաբար օգտագործմամբ: Գումարը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 86060.6 հազ. դրամ: 2016 թվականի դրամարկղային ծախսը 2015 թվականի նվազել է 3705.5 հազ. դրամով որը պայմանավորված է խիստ տնտեսված ռեժիմով աշխատելու հանգամանքով:

**3. «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ»** (բաժին 01, խումբ 01, դաս 03, ծրագիր 04) ծրագրով ճշտված պլանը կազմել է 5201.9 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 5201.9 հազ. դրամ: 2016 թվականի ընթացքում համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆԿ-28-Ա, ՆԿ-29-Ա, ՆԿ-39-Ա, ՆԿ-223-Ա հրամանագրերի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 907-Ա որոշումների կազմակերպվել է 5 գործուղում: 2015 թվականի փաստացի կատարվել է 9266.9 հազ. դրամ դրամարկղային ծախս: 2016 թվականին 4065 հազ. դրամով պակաս քան 2015 թվականին՝ պայմանավորված ավիատոմսերի արժեքով:

**4. «Մշակութային միջոցառումների իրականացում»** (բաժին 08, խումբ 02, դաս 05, ծրագիր 04) ծրագրով նախատեսվել է 385298.6 հազ. դրամ: ՀՀ կառավարության 758-Ն, 757-Ն որոշումների համաձայն նվազեցվել է 46309.5 հազ.դրամ: Ճշտված պլանը կազմել է 338989.1 հազ.դրամ: Ֆինանսավորումը՝ 338989.1 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 325850.6 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է՝ 13138.5 հազ.դրամ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վերը նշված կառավարության որոշման համաձայն, համաձայնագրերի հիման վրա նվազեցվել են պայմանագրերի գները: Տնտեսված գումարը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: 2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 216515.5 հազ. դրամ: 2016 թվականի դրամարկղային ծախսը 2015 թվականի նկատմամբ աճել է 109335.1 հազ. դրամով, որը պայմանավորված է «Իմ Հայաստան» փառատոնի անցկացմամբ, այն տեղի է ունենում 2 տարին մեկ անգամ և «Սփյուռք ամառային դպրոցի» ֆինանսավորման ավելացմամբ:

### **Նպատակներն ու խնդիրները.**

Ծրագրի նպատակն է Հայ մշակույթի պահպանումը և տարածումը սփյուռքում՝ հայապահպանությունը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են սփյուռքի գիտական և մասնագիտական շրջանակների, հասարակական, քաղաքական, մշակութային գործիչների, հայտնի բարերարների, գործարարների մասնակցությամբ՝ Հայաստանում խորհրդատուների, կոնֆերանսների և հոբելյանական միջոցառումների կազմակերպում, անցկացում և աշխատանք համայնքների հետ:

- **Ծրագրում ընդգրկվել են**

1. **«Մեր մեծերը»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 4000.00 հազ. դրամ: Ծրագրից նվազեցվել է 1000.0 հազ.դրամ Ճշտված գումարը կազմել է՝ 3000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը՝ 3000 հազ.դրամ: Իրականացվել է 2016 թվականին ՀՀ սփյուռքի նախարարության կողմից

«Մեր մեծեր» հոշակած՝ Սրբուհի Տյուսաբի, Վահե Հայկի, Գրիգոր Խանջյանի, Ավետիս Ահարոնյանի և Գրիգոր Չոհրապի կյանքն ու գործունեության լուսաբանող սկավառակների և գրքույկների ձեռք բերում: 2015 թվականի ֆինանսավորման ծավալը ևս կազմել է 4000.00 հազ.դրամ, իսկ դրամարկղային ծախսը կազմել է 3946 հազ. դրամ: 2016 թվականի դրամարկղային ծախսը 946.0 հազ. դրամով պակաս է, քան 2015 թվականին, որը պայմանավորված է վերը նշված նվազեցմամբ:

2. **«ՀՀ-ում համահայկական խորհրդատողությունների անցկացում»** ծրագրի միջոցառման արժեքը 23000.00 հազ.դրամ է: Ծրագրից նվազեցվել է 3300.0 հազ.դրամ: Ճշտված պլանը կազմել է 19700 հազ.դրամ: Ծրագրի դրամարկղային ծախսը կազմել է 19632.1 հազ. դրամ: 67.9 հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Միջոցառման նպատակն է ՀՀ-ում կազմակերպել և անցկացնել համահայկական խորհրդատողություններ: Այս տարի իրականացվել է՝

- «Աշխարհի առաջնակարգ համալսարաններում սովորող հայ ուսանողների համաժողով»
- «Հայկական աշխարհը համացանցում» միջոցառման կազմակերպում
- «Լրագրողների համահայկական 8-րդ համաժողով»
- «Մայրենի լեզվի ուսուցման խնդիրները տարածաշրջանում» եռօրյա համաժողով
- «Իսլամացած հայերի հիմնախնդիրներին» նվիրված համաժողով
- «Մայրենի լեզվի ուսուցման խնդիրները տարածաշրջանում» եռօրյա համաժողովին 4 մասնակիցների ավիատոմսերի և կեցության ապահովում
- «Ազդարարում» գնման գործընթացի վերաբերյալ հայտարարության տեղադրում:

2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 19060.9 հազ. դրամ: 2016 թվականին 571.2 հազ. դրամով ավել քան 2015 թվականին, որը պայմանավորված է մասնակիցների քանակի ավելացմամբ:

3. **«Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառում»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 9000.00 հազ. դրամ: Նվազեցվել է 3500.0 հազ.դրամ: Ճշտված պլանը կազմել է 5500 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 5406.7 հազ.դրամ: Տարբերությունը՝ 93.3 հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Իրականացվել են՝

- «Հայոց ցեղասպանությանը նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպում»
- «Հայերեն-քրդերեն, քրդերեն-հայերեն բառարանի» ձեռքբերում

2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 8640.0 հազ.դրամ 2016 թվականին դրամարկղային ծախսը 3233.3 հազ.դրամ պակաս է, քան 2015 թվականին, որը պայմանավորված է վերը նշված նվազեցմամբ:

4. «**Համահայկական մրցանակաբաշխություն**» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 8000.00 հազ. դրամ: Նվազեցվել է՝ 2000.0 հազ.դրամ: Ճշտված պլանը կազմել է՝ 6000.0 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 6000 հազ.դրամ, որը կիրականացվի 2017 թվականին: Նպատակը սփյուռքում կատարվող աշխատանքների խրախուսման, մրցակցության մեջ ի հայտ եկած նվաճումների, ամենօրյա շնորհակալական աշխատանքի գնահատման, հայապահպանություն իրականացնելու գործում մեծ ավանդ ունենալու համար՝ խրախուսվում են սփյուռքի հայազգի մանկավարժները, մշակութային ոլորտի ուսուցիչները և այլ հայապահպանություն իրականացնող անձիք: 2015 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 7970.0 հազ. դրամ: 2016 թվականին 1970 հազ.դրամ պակաս, քան 2015 թվականին ,որը պայմանավորված է վերը նշված նվազեցմամբ:

5. «**Աջակցություն համայնքների կայացմանը**» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1000 հազ. դրամ: Ճշտված պլանը՝ 1000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 1000 հազ դրամ: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել

- ՀՀ օրհներգի ձևավորված դիսկ-17 հատ
- ՀՀ դրոշ-17 հատ
- Հայկական այբուբենի տառերը-17 հատ
- ՀՀ զինանշան-17 հատ
- ՀՀ սահմանադրություն-17 հատ
- Փաթեթավորման արկղ-17 հատ

2015 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 972.4 հազ. դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը 27.6 հազ.դրամով ավել է, քան 2015 թվականին, որը պայմանավորված է գնային աճով:

6. «**Աշխատանք սփյուռքի համայնքների հետ**» ծրագրի իրականացման գումարը կազմել է 23000.00 հազ. դրամ: Նվազեցվել է 13000.0 հազ.դրամ: Ճշտված պլանը կազմել է՝ 10000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 4394.0 հազ. դրամ: 5606.0 հազ. դրամ վերադարձվել է պետ. բյուջե: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է՝

- ՀՀ սփյուռքի նախարար խորհրդական Լուսինե Գալաջյանի այցը Բոստոն, Նյու Յորք, Վիեննա
- Մշակութային գործիչներ Կ.Ղազարյանի և Ա. Գրիգորյանի համար ձեռք է բերվել ավիատոմս՝ Երևան-Մոսկվա-Երևան
- Հանրային հեռուստաընկերության նկարահանող խմբի համար 4 հատ ավիատոմսի ձեռք բերում Երևան-Մոսկվա-Բեռլին-Մոսկվա-Երևան
- ՀՀ սփյուռքի նախարարի այցը՝ Փարիզ-Բրյուսել
- ՀՀ սփյուռքի նախարարի այցը՝ Բեյրութ
- Պատմաբան-ազգագրագետ Մելինե Անումյանի այցը Թուրքիա:

2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 14515.9 հազ. դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը 10121.9 հազ.դրամով պակաս է, քան 2015 թվականին, որը պայմանավորված է վերը նշված նվազեցմամբ:

**7. «Կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 16000.00 հազ.դրամ: Նվազեցվել է 6000.0 հազ.դրամ: Ճշտված պլանը կազմել է՝ 10000.0հազ.դրամ: Դրամարկղային ծախսը՝ 9287.3 հազ. դրամ, տարբերությունը՝ 712.7 հազ. դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է՝

- Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և նյութերի տրամադրում
- Թուրքական և Ադրբեջանական գործոնը Լատինական Ամերիկայում. առկա հիմնախնդիրները և մարտահրավերները կլոր սեղան քննարկում
- Հեռավոր սփյուռքի հայ համայնքներում գործող թատերական խմբերի նկարահանում, ցուցահանդեսի կազմակերպում
- Երգիչներ՝ Գրիգոր Միրզոյանի և Արմեն Դավթյանի գործուղման ծախսեր՝ Ավստրալիա և Հարավային Ամերիկա
- Պատմաբան Թ.Ասոյանի այցը Լոս Անջելես

2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 8131.1 հազ.դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը 1156.2 հազ.դրամով ավել է, քան 2015 թվականին, որը պայմանավորված է միջոցառումների քանակի ավելացմամբ:

**8. «Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ Հայաստանում կամ սփյուռքում»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 10000.00 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է 10000.0հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է՝ 9938.5 հազ. դրամ: 61.5

հազ.դրամ վերադարձվել է պետ բյուջե: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել և իրականացվել է՝

- «Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ» /մեկ միջոցառման կազմակերպում/
- «Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ» /հինգ միջոցառման կազմակերպում/
- «Ազդարար» կայքում գնման գործընթացների վերաբերյալ հայտարարության տեղադրում:

2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 6220.0 հազ.դրամ: 2016 թվականի դրամարկղային ծախսը 3718.5 հազ.դրամով ավել է, քան 2015 թվականին, որը պայմանավորված է միջոցառումների քանակի ավելացմամբ:

9. «Աջակցություն Մերձավոր սփյուռքի համայնքներին/Վրաստան/» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 22000.00 հազ. դրամ: Նվազեցվել է 909.5 հազ.դրամ: Ճշտված պլանը՝ 21090.5 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը՝ 20885.0 հազ.դրամ: 205.5 հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում իրականացվել են՝

2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 21832.2 հազ.դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը 947.2 հազ.դրամով պակաս է, քան 2015 թվականին, որը պայմանավորված է վերը նշված նվազեցմամբ: Ծրագիրը շարունակական է և ապագայում ևս իրականացվելու են նմանատիպ միջոցառումներ:

10. «Սփյուռքահայերի ինտեգրման ծրագիր» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 11000 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 11000.0 հազ.դրամ: Դրամարկղայինը՝ ծախսը կազմել է 10915 հազ.դրամ: 85.0 հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Միջոցառման շրջանակներում իրականացվել է՝

- Աջակցություն սփյուռքահայ ստեղծագործողներին (ցուցահանդեսի կազմակերպում)
- Սփյուռքահայ արվեստագետներին նվիրված միջոցառում
- Սփյուռքահայ ուսանողների և աշակերտների համար միջոցառում
- Սփյուռքահայերի ինտեգրման միջոցառումների կազմակերպում
- Սփյուռքահայ ստեղծագործողների կայացման համար միջոցառումների կազմակերպում
- ՀՀ-ում բնակվող սիրիահայերի հիմնախնդիրներին նվիրված միջոցառում

2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 10880.0 հազ.դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը 35.0 հազ.դրամ ավել, քան 2015 թվականին, որը պայմանավորված է գնաճով:

**11. «Հայկական սիյուռքի գիտական կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծում»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 4000.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 4000.0 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 3684.4 հազ. դրամ: 315.6 հազ.դրամը վերադարձվել է պետ բյուջե: Ծրագրի նպատակն է ներուժի հաշվառման մեխանիզմների և տվյալների միասնական համակարգի համալրումն ու սպասարկումը: Ծրագրի շրջանակներում վճարվել է աշխատավարձ մասնագետներին՝ 3109.5 հազ.դրամ, ինտերնետային կայքի անխափան աշխատանքի, սպասարկման, հանգուցային անվան գրանցման, մրցույթի հրավերի տպագրության ծառայությունների ձեռք բերման համար՝ 574.9 հազ.դրամ: 2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 3952.7 հազ.դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը 268.3 հազ.դրամով պակաս է, քան 2015 թվականին, որ պայմանավորված է աշխատավարձի ֆոնդի տնտեսմամբ:

**12. «Եվրասիական տարածաշրջանի համայնքների կրթամշակութային զարգացում»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 26000.0 հազ. դրամ: Նվազեցվել է 9600.0 հազ.դրամ: Ճշտված պլանը՝ 16400.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը՝ 16042.0 հազ.դրամ: 358 հազ. դրամ ետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում իրականացվել է՝

- «Ազդարար» կայքում գնման գորղնթացների վերաբերյալ հայտարարություն
- Հայկական տարազների ձեռքբերում
- Աջակցություն Եվրասիական տնտեսական միության երկրների հայկական համայնքների մշակութային խմբերի
- Եվրասիական տնտեսական միության երկրների հայկական կրթօջախների ուսուցիչների վերապատրաստում ՀՀ-ում միջոցառման կազմակերպում /2 միջոցառում/
- Հայ գրողների դիմանկար ալբոմի ձեռք բերում
- Աջակցություն Եվրասիական տնտեսական միության երկրների հայկական համայնքների մշակութային խմբերին
- Ավիատոմսերի ձեռք բերում Երևան-Մոսկվա-Աստրախան-Վոլգոգրադ

2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 21163.7 հազ.դրամ:

2016 թվականին 5121.7 հազ.դրամ պակաս քան 2015 թվականին պայմանավորված վերը նշված նվազեցմամբ:

**13. «Սփյուռքյան կառույցների և նշանավոր անհատների ծրագրերի իրականացում Հայաստանում»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 24298.6 հազ. դրամ: Նվազեցվել է 2000.0 հազ.դրամ ճշտված պլանը՝ 22298.6 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է՝ 22159.5 հազ.դրամ: 139.1 հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում իրականացվել է՝

- Ազդարար կայքում գնման գործընթացների վերաբերյալ հայտարարության տեղադրում
- Հայաստանում սփյուռքյան հայկական կազմակերպությունների հետ միջոցառումների կազմակերպում
- Սփյուռքահայերի և/կամ սփյուռքահայ կառույցների մեծարման երեք միջոցառումների կազմակերպում
- Սփյուռքի նշանավոր անհատների չորս միջոցառման կազմակերպում
- Համայնքային օրեր միջոցառումների կազմակերպում

2015 թվականին միջոցառման դրամարկղային ծախսը կազմել է 24090.0 հազ դրամ 2016 թվականին դրամարկղային ծախսը 1930.5 հազ.դրամով պակաս է, քան 2015 թվականին, որը պայմանավորված է վերը նշված նվազեցմամբ:

**14. «Սփյուռք ամառային դպրոցի կազմակերպում»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 120000.0 հազ. դրամ: Նվազեցվել է 5000.0 հազ.դրամ: Ճշտված պլանը՝ 115000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 110076.5 հազ.դրամ: 4923.5 հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե, իսկ 2015 թվականին միջոցառման արժեքը կազմել է 80000.00 հազ դրամ, դրամարկղային ծախսը՝ 65013.5 հազ. դրամ: 2016 թվականին ծրագրի ֆինանսավորումը աճել է 2015 թվականի հետ համեմատ պայմանավորված մասնակիցների թվաքնակով և դասաժամերի ավելացմամբ:

Ծրագրի նպատակն է իրականացնել 5 ուղղությամբ ամառային ուսուցողական դասնթացների կազմակերպում: Իրականացվել է «Ամառային դպրոցի» ուսուցիչների վերապատրաստում, հայոց լեզվի, պարուսույցների, երգի, երիտասարդ առաջնորդների, սփյուռքի լրագրողների դասնթացի կազմակերպում: Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ:

**15. «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի կազմակերպում** ծրագրի իրականացման համար նախատեսված գումարը 84000.0 հազ.դրամ է: Ճշտված



պլանը կազմել 84000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը՝ 83429.6 հազ.դրամ: Իրականացվել է՝

- «Իմ Հայաստան» փառատոնի կազմակերպչական աշխատանքներ
- «Իմ Հայաստան» փառատոն «Երգչախմբի փառատոնի» միջոցառման իրականացում
- «Իմ Հայաստան» փառատոն «ԼՂՀ միջոցառման» կազմակերպում
- «Իմ Հայաստան» փառատոն «Պարարվեստի փառատոնի» կազմակերպում
- «Իմ Հայաստան» փառատոն «Ասմունքի փառատոնի» կազմակերպում
- «Իմ Հայաստան» փառատոն «Դուդուկի փառատոնի» կազմակերպում
- «Իմ Հայաստան» փառատոն «Ռուսաստանի օրերի» կազմակերպում
- Աշխատավարձ մասնագետներին
- Ազդարար կայքում գնման գործընթացների վերաբերյալ հայտարարության
- Վառելանյութի ձեռք բերման ծախսեր
- Գրասենյակային ապրանքների, հեռախոսների, ինտերնետ կապի, մաքուր ջրի ձեռք բերման ծախսեր

**5. «Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացում»** (բաժին 08, խումբ 02, դաս 05, ծրագիր 13) ծրագրով նախատեսվել է 20000.0 հազ.դրամ: Ճշտված պլանը և ֆինանսավորումը կազմել է 20000.0 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 19800.0 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 200.0 հազ.դրամը ՀՀ պետական բյուջե է վերադարձվել: Ծրագրի շրջանակներում իրականացվել է՝

- Տարածքային համագործակցության և համայնական մշակութային ծրագիր
- Ազդարար կայքում գնման գործընթացի վերաբերյալ հայտարարության տեղադրում

2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 19835.0 հազ.դրամ: 2016 թվականի 35.0 հազ.դրամով պակաս, քան 2015 թվականին, որը պայմանավորված է գնումների արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից ներկայացված ցածր գնով:

- **Նպատակներն ու խնդիրները**

Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում է մի շարք հայապահպանական խնդիրներ: Մասնավորապես իրականացվում են համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ:

**6. «Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ»** (բաժին 08, խումբ 03, դաս 02, ծրագիր 12) ծրագրով նախատեսվել է 33036.40 հազ. դրամ: ՀՀ կառավարության 758-Ն, 757-Ն որոշումների համաձայն նվազեցվել է՝ 2546.1 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է՝ 30490.3 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 30456.6 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է՝ 33.7 հազ. դրամ, որը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 33036.4 հազ. դրամ: 2016 թվականի դրամարկղային ծախսը 2579.8 հազ. դրամով պակաս է, քան 2015 թվականին, որը պայմանավորված է կառավարության որոշմամբ խիստ խնայողության ռեժիմով աշխատելու հանգամանքով:

Ծրագրերը իրականացվել են ամբողջությամբ և ընդգրկված են եղել հետևյալ միջոցառումները.

- «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակում,
- «Էլեկտրոնային գրադարանի համալրում»,
- «Արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը փոխարկիչ» ծրագրի համալրում և սպասարկում:

Հաշվետու ժամանակահատվածում «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում տեղադրվել է 23737 նյութ, որն իր մեջ ամփոփում է նորություններ, հոդվածներ, հարցազրույցներ՝ արևելահայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով: 2016 թվականին «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում բացվել է 5 նոր խորագիր՝ «Անկախություն 25», «Սփյուռքը հայրենիքի կողքին է», «Նախարարի օրագիր», «Լրագրողների համահայկական 8-րդ համաժողով», «Դու ինչ ես անում Ղարաբաղի համար»: Պարբերականն օրական ունի շուրջ 2600 այցելու:

**7. «Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրում և առարում սփյուռքի համայնքներին»** (բաժին 08, խումբ 03, դաս 02, ծրագիր 13) ծրագրի վերաբերյալ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 10000.0 հազ. դրամ: ՀՀ կառավարության 758-Ն, 757-Ն որոշումների համաձայն նվազեցվել է 1000.0 հազ. դրամ: Ճշտված պլանը, ֆինանսավորումը, դրամարկղային ծախսը կազմել է 9000.0 հազ. դրամ: 2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 10000.0 հազ. դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը 1000.0 հազ. դրամ պակաս է եղել, քան 2015 թվականին, որը պայմանավորված է կառավարության որոշմամբ խիստ խնայողության ռեժիմով աշխատելու հանգամանքով:

- **Նպատակները.**

Ծրագրի նպատակն է ուսումնական, ուսումնամեթոդական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի և ՀՀ խորհրդանիշերի, սփյուռքի հայ համայնքներին և հայկական դպրոցներին առաքում:

- **Խնդիրները.**

Սփյուռքի հայկական կրթօջախներում այսօր կա ուսումնական և հանրամատչելի գրականության պակաս:

2016 թվականին ծրագրի շրջանակներում 39544 կտոր գրականություն առաքվել է մոտ 36 երկրների հայ գաղթօջախների ուսումնական հաստատություններին և կազմակերպություններին, իսկ 2015 թվականին՝ 50000 կտոր գրականություն: 2016 թվականին՝ 10456 կտոր գրականություն պակաս է առաքվել քան 2015 թվականին պայմանավորված վերը նշված կառավարության որոշմամբ:

**8. «Սփյուռքի երիտասարդների Հայաստան պարբերական այցելություններ «ԱՐԻ ՏՈՒՆ»** (բաժին 08, խումբ 04, դաս 01, ծրագիր 03) ծրագրի վերաբերյալ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 100000.0 հազ.դրամ: ՀՀ կառավարության 758-Ն,757-Ն որոշումների համաձայն նվազեցվել է՝ 8000.0 հազ.դրամ: Ճշտված պլանը կազմել է 92000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը՝ 91189.7 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 810.3 հազ.դրամ է, որը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: 2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 93507.2 հազ. դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը 2317.5 հազ. դրամով պակաս է, քան 2015 թվականին, որը պայմանավորված մասնակիցների թվաքանակի փոփոխությամբ՝ համաձայնագրերի հիման վրա պայմանագրային գները նվազեցվել են: 2016 թվականի մասնակցել է 1000 երիտասարդ, իսկ 2015 թվականին 1365 երիտասարդ:

**Նպատակները.**

Ծրագրի նպատակն է սփյուռքում բնակվող 13-20 տարեկան հայազգի երիտասարդների համար կազմակերպել և իրականացնել 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10 օր բնակվում են հայ ընտանիքներում 4-օր ճամբարում: Մասնակցում են թվով 9 ճանաչողական շրջայցերի /Սևան, Էջմիածին, Նորավանք, Խոր Վիրապ և այլն/ ինչպես նաև ճամբարում մասնակցում են հայոց լեզվի, հայկական երգի և պարի դասերին: Գլխավոր նպատակներից է նաև սփյուռքում բնակվող հայազգի երիտասարդների հայապահպանությունը և ոգին:

- **Խնդիրները.**

Ծրագրի իրականացման արդյունքում լուծվում են մի շարք խնդիրներ: Երիտասարդներին ծանոթացնել հայկական մշակույթին, հայ ընտանիքին, ինչպես նաև ծրագրի մասնակիցներին ավելի մոտեցնել հայրենիքին:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են՝ մասնակիցներին պարագաների տրամադրում, տպագրական աշխատանքներ, մասնակիցներին դիմավորում և ճանապարհում, շրջայցեր, սննդի սպասարկում, ծաղիկների գնում և առաքում, դահլիճների վարձակալություն, տեսանկարահանում և լուսանկարանաում, փակման հանդիսավոր արարողություն, կեցություն ճամբարում, համակարգող փորձագետներին աշխատավարձի տրամադրում:

**9. «Հայաստան–Սփյուռք գործակցություն թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում»**

(բաժին 08, խումբ 03, դաս 01, ծրագիր 09) ծրագրի վերաբերյալ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 52600.00 հազ.դրամ: Ճշտված պլանը՝ 52600.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է՝ 52422.0 հազ.դրամ: 178.0 հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: 2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 51750.0 հազ. դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը 672.0 հազ.դրամով ավել է, քան 2015 թվականի, որը պայմանավորված է երկու հեռուստահաղորդումների ավելացմամբ:

- **Նպատակները.**

Ծրագրի նպատակն է պահպանել և զարգացնել կապերը հայրենիք-սփյուռք, սփյուռք-սփյուռք և սփյուռքում ավելի հասանելի դարձնել սփյուռքի նախարարության գործունեությունը, ավելի մանրամասն ներկայացնել իրականացվող ծրագրերն ու դրանց նպատակները, ինչպես նաև համայնքներում տարածել Հայաստանն ու հայկական մշակույթը քարոզող հաղորդումներ և հոլովակներ:

- **Խնդիրները.**

Ծրագրի իրականացման արդյունքում հայկական հեռուստատեսությամբ և հայկական համայնքներում կցուցադրվեն հայապահպանություն քարոզող և Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող հեռուստահաղորդումներ, հոլովակներ և ֆիլմեր:

• **Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.**

- «Սփյուռքի ժամ հեռուստահաղորդաշար»- ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 10000.00 հազ. դրամ /40 հեռուստահաղորդում/:
- «Մերոնք»-հեռուստանախագծի ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 17300.00 հազ. դրամ /72 հաղորդում/:
- «Հայ Սփյուռք»- ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 4000.00 հազ. դրամ /10 հաղորդում/:
- «Արմնյուզ»- հեռուստահաղորդման պատրաստման համար ֆինանսավորման ծավալը կազմել է 6000.00 հազ. դրամ /20 հաղորդում/:
- «ԱրարատTV Տոհմածառեր»- ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1500.00 հազ.դրամ /20 հաղորդաշար/
- Տեղեկատվական նյութի տեղադրում «Առավոտ» օրաթերթում ֆինանսավորման ծավալը կազմել է 800.0 հազ.դրամ /40 նյութ/
- «Ասեկոսե» կայքում նյութերի տեղադրման ֆինանսավորման ծավալը կազմել է 500.0հազ դրամ /10 նյութ/
- Տեղեկատվական նյութերի տեղադրում «news.am» կայքում ֆինանսավորման ծավալը կազմել է 500.0 հազ դրամ /10 նյութ/
- Սփյուռքահայ գործարարները Հայաստանում հաղորդաշարի ֆինանսավորման ծավալը կազմել է 4000.0 հազ.դրամ /20 հաղորդում/
- Տեղեկատվական նյութերի տրամադրում «Ավանգարդ» թերթում- ֆինանսավորման ծավալը կազմել է 500.0 հազ դրամ /10 նյութ/
- Տեղեկատվական նյութերի տեղադրում «tert.am» ֆինանսավորման ծավալը կազմել է 500.0 հազ. դրամ /10 նյութ/
- Տեղեկատվական նյութերի պատրաստում և տեղադրում «Գոլոս Արմենիա» թերթում ֆինանսավորման ծավալը կազմել է 1500.0 հազ դրամ /30 նյութ/
- «Հայկական հետք» հաղորդաշարի ֆինանսավորման ծավալը կազմել է 1000.0 հազ.դրամ /40 հաղորդում/
- «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ֆինանսավորման ծավալը կազմել է 500.0 հազ.դրամ /10 հաղորդում/
- «Եռագույն» կայք էջում նյութի տեղադրման ֆինանսավորումը կազմել է 500.0 հազ.դրամ /10 նյութ/
- Սկավառակների, գրքույկների, ֆիլմերի թողարկման և բազմացման ֆինանսավորման ծավալը կազմել է 1880.0 հազ.դրամ

- ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացված միջոցառումների տեսաֆիլմերի պատրաստման ֆինանսավորման ծավալը կազմել է 1442.0 հազ.դրամ

**10. «Գիտական և գիտատեխնիկական հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ»** (բաժին 01, խումբ 04, դաս 01, ծրագիր 02) ծրագրի շրջանակներում պետական աջակցություն

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով հաստատվել է 14400.0 հազ. դրամ, որից ճշտված պլանը՝ 14400 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 14400.0 հազ. դրամ: 2015 թվականի դրամարկղային ծախսը կազմել է նույնպես 14400.0 հազ.դրամ: Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ:

**• Նպատակներն ու խնդիրները**

Ծրագրի իրականացման նպատակն է Պետական պատվերի միջոցով, մասնագիտացված կազմակերպությունների կողմից իրականացնել սփյուռքին վերաբերվող 12 թեմաների գիտական հետազոտությունների պատվեր:

2016 թվականին ծրագրի շրջանակներում պատվիրվել են թվով 12 գիտական հետազոտություններ հետևյալ կազմակերպություններին.

- «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ - ին «Գրական արևմտահայերենի ուսումնասիրության պատմություն» ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ - ին «Արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման ուղիները» ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ - ին, «Գրական սփյուռք 2016» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «Նորավանք» գիտական հիմնադրամին, «Ներքին տեղաշարժեր հայկական սփյուռքում 1950-1980թթ.» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամինին, «Հայոց ցեղասպանության ճանաչման և հետևանքների վերացման

հիմնախնդիրները» «Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուսում» «Հայ կանայք 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբի հերոսամարտի տարիներին» գիտական ծրագրերի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 3600.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

- «ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ին, «Գրաբարի ներկայացումը համընդհանուր ցանցային լեզվի բառարանային համակարգում» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ» ՊՈԱԿ-ին, «Սիրիահայերի արդի իրավասոցիալական խնդիրները ՀՀ-ում» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին «Հայկական համայնքները խորհրդային հանրապետությունում 1941-1991թթ» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամին «Համշենը և համշենահայություն. արդի հիմնախնդիրներ» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- ԵՊՀ հետազոտությունների և գործարարության կենտրոն հիմնադրամին «Սփյուռքի ներդրումային ներուժի բարձրացման ուղիները ՀՀ տնտեսությունում» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

**11. «Սփյուռք տարեգրքի պարբերականի հրատարակում»** (Բաժին 08, Խումբ 03, Դաս 02, Ծրագիր 14) ծրագրի վերաբերյալ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով հաստատվել է 8200.00 հազ.դրամ: ՀՀ կառավարության 757-Ն, 758-Ն որոշումներով նվազեցվել է 2200.0հազ.դրամով: Ճշտված պլանը՝ 6000.0հազ.դրամ է, իսկ ֆինանսավորումը, դրամարկղային ծախսը կազմել է 6000.0 հազ.դրամ: 2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 7761.6 հազ.դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը 1761.6 հազ.դրամով պակաս է, քան 2015 թվականին, որը պայմանավորված է վերը նշված որոշմամբ՝ այն է ֆինանսավորման նվազեցման արդյունքում նվազեցվել է նաև գրքերի տպագրության քանակը:

- **Նպատակը**

Տարեգրքի նպատակն է արժևորել, գրի առնել, լրացնել և ամբողջական դարձնել սփյուռքի հայ համայնքների գործունեությունը, Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում իրականացվող ծրագրերը և ձեռնարկները:

Տարեգիրքը կարող է հիմք հանդիսանալ էական քայլեր իրականացնելու Սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների բարելավման և տվյալների միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ, համապարփակ տեղեկատվություն տարածել տարբեր երկրներում գործող հայկական համայնքների մասին:

Սփյուռք-Սփյուռք և Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումը, աշխարհասփյուռ հայերի համագործակցության հնարավորությունների ընդլայնումը և միջհամայնքային կապերի սերտացումն այսօր դիտարկվում է, որպես գերակա խնդիր:

Տարեգրքի միջոցով լուսաբանվում է ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից տարվա ընթացքում Սփյուռքի հետ իրականացված ծրագրերի, համահայկական կազմակերպությունների և հոգևոր կառույցների ազգապահպան ձեռնարկները հասանելի դարձնելը աշխարհասփյուռ հայությանը:

**12. «Հայրենիք Սփյուռք գործակցության ծրագրերի իրականացում»** (Բաժին 08, Խումբ 02, Դաս 04, Ծրագիր 04) ծրագրի վերաբերյալ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեյով հաստատվել է 35523.3 հազ. դրամ: Համաձայն ՀՀ կառավարության 724-Ն որոշման կատարվել է վերաբաշխում 12.3 հազ.դրամով: Ճշտված պլանը և դրամարկղային ծախսը կազմել է 35511.0 հազ.դրամ: 2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 35417.3 հազ. դրամ: 2016 թվականի և 2015 թվականի դրամարկղային ծախսի տարբերությունը կազմում է 93.7 հազ.դրամ: Աճը պայմանավորված է հաշվապահական հաշվառման համար Հայկական Ծրագրերի նոր տարբերակի ձեռք բերմամբ:

- **Նպատակը**

Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ տեղեկատվական վերլուծական նյութերի պատրաստում և տարածում, համահայկական լրատվական ռեսուրսների (համահայկական կայքերի, տեղեկագրերի, հեռուստատեսային լրատվական հաղորդումների, հեռուստակամուրջների և այլն) ստեղծում:



**13. «Պետական հիմնարկների աշխատողների սոցիալական փաթեթով պահովում»** (Բաժին 10, Խումբ 09, Դաս 02, Ծրագիր 03) ծրագիր

Նշված ծրագրի ճշտված պլանը կազմել է 7848.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը՝ 6707.8 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությաունը կազմում է՝ 1140.2 հազ.դրամ, որը պայմանավորված է սոց. փաթեթի շահառուների քանակով: Գումարը ետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե: 2015 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 6116.0 հազ.դրամ: 2016 թվականին 591.8 հազ. դրամով ավել, քան 2015 թվականին՝ պայմանավորված սոցիալական փաթեթի շահառուների ավելացմամբ:

**14. «Աջակցություն Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանը»** (Բաժին 08 Խումբ 02 Դաս 07 Ծրագիր 01) ծրագիր

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով հաստատվել է 4000.0 հազ.դրամ: Ճշտված պլանը՝ 4000.0 հազ.դրամ: Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 4000.0 հազ դրամ: Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ: 2015 թվականին դրամարկղային ծախսը ևս կազմել է 4000.0 հազ.դրամ:

**15. «Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին»** (Բաժին 08 Խումբ 03 Դաս 02 Ծրագիր 08) ծրագիր

ՀՀ պետական բյուջեով հաստատվել է 10000.0 հազ.դրամ: Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 10000.0 հազ.դրամ: Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ: 2015թվականին հատկացվել և ծախսագրվել է նույն չափի գումար:

**16. «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ»** (Բաժին 11, Խումբ 01, Դաս 01, Ծրագիր 01)

2016 թվականին ՀՀ կառավարության 27.10.2016 թվականի 1188-Ն որոշմամբ «Նվիրաբերություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով 20000.0 հազ.դրամ գումար է հատկացվել «Սիրիահայ հիմնախնդիրները համակարգող» հասարակական կազմակերպությանը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների սիրիահայ ուսանողներին 2016/2017 ուսումնական տարվա ուսման վարձ հատկացնելու նպատակով: Դրամարկղային ծախսը կազմել է 20000.0 հազ.դրամ: 2015 թվականին պահուստային ֆոնդից հատկացվել է՝ 24656.0 հազ.դրամ: 2016 թվականին 4656.0 հազ.դրամ պակաս է հատկացվել, քան 2015 թվականին, որը պայմանավորված է բուհերում սովորող սիրիահայ ուսանողների քանակով:

**17. «Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում»** (Բաժին 09, Խումբ 06, Դաս 01, Ծրագիր 19) ծրագիր

2016 թվականի ՀՀ պետական բյուջեով հաստատվել է 100000.0 հազ.դրամ: ՀՀ կառավարության 758-Ն, 757-Ն որոշումների համաձայն նվազեցվել է 2000.0 հազ.դրամ: Ճշտված պլանը՝ 98000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 97134.0 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 866.0 հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: 2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 99822.6 հազ.դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը 2688.6 հազ.դրամով պակաս է, քան 2015 թվականին, որը պայմանավորված է կառավարության որոշմամբ խիստ խնայողության ռեժիմով աշխատելու հանգամանքով, ինչպես նաև աշխատավարձի ֆոնդի խնայողաբար օգտագործմամբ:

**Ծրագրի նպատակն է՝**

ա) աջակցել սփյուռքահայության լեզվամշակութային ուժացման դեմ պայքարին, հայեցի կրթության ու դաստիարակության, հայ ինքնության ճանաչմանը, ազգային ինքնագիտակցության ձևավորմանը, Սփյուռքի հայապահպանության ծրագրերի իրականացմանը,

բ) նպաստել համայնքներում կրթական ծրագրերի իրականացմանը, աջակցել կրթօջախներում ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու որակի բարելավմանը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



Ֆ. ԶԱՔԱՐՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ